



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5. 7 V
Ltn
1483



1 0 9 9

1 9 9 9

ԵՐԿՈՒ ՏՈՂ


ՓԱՐԻՉ. — ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ.

Paris.— Typographie arménienne de Walder, rue Bonaparte, 44.

W. Hunt

ՄԻՔԱՅԷԼԻ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՅ

ԵՐԿՈՒ ՏՈՂ



ձշմարտութիւնը կրօն է,
անրան միայն խնդրեցիք,
իսկ անրանից ոչինչ :

ROBERT OWEN.

1453.



ՓԱՐԻՉ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1861




46772-uh

1483-60

38 1485

Ե Ր Կ ՈՒ Տ Ո Ղ



Ազատութիւն, գոչեցի, Թող որոտայ իմ գլխին,
Փայլակ, կայծակ, հուր, երկամ, Թող դաւ դնէ Թշնամին.
Ես մինչ ի մահ, կախադան, մինչև անարգ մահու սիւն,
Պիտի գոռամ, պիտ' կրկնեմ, անդադար, ազատութիւն:

Կոմս ԷՄՄԱՆՈՒԷԼ.

Հայկական դպրութեան ասպարէզը իշանելուց յետոյ, քանի մի անգամ հանդիպեցաւ մեզ, երես առ երես սրատահել անամօթ վատութեան: Եւ ոչ անգամ վշտացանք և ոչ անգամ վիրաւորվեցանք այդ յարձակմունքներից, այլ մանաւանդ ցաւեցանք յարձակվողների վերայ. որովհետեւ բարոյական հիւանդութիւնը մինչև ի մահ տիրելով նոցա վերայ, սրատաւ էր եղել այդ ցնցողական և անգիտակից շարժողութեններին:

Մէք, վաղ ուրեմն, գուցէ շատ յառաջ, քան թէ զրիչ առինք ու հրասպարակ իշանք, գիտէինք, որ խաւար շրջապատի մէջ բանդարկվածների համար շատ ցաւեցուցիչ է ազատ լոյսը, Թերեւս աչքերի նկատմամբ, գիտէինք, որ հին խելքերը երբէք համաձայնելու չէին խաղաղութեամբ տեղի տալ նոր գաղափար-

ներին, զիտէինք, որ նորը պատերազմով պիտի կանգնեցնէր իր դրօշակը հնուժեան աներակների վերայ :

Այս զիտութենից հետեւեցաւ այն, որ այդ յարձակմունքը, թերեւս շատ անգամ մեր անձին վերայ, փոխանակ մեր գաղափարների, ո՛չ երբէք կարողացան, և ո՛չ նաև մի մաղի չափ, խոտորեցնել մեզ մեր ուխտեալ ճանապարհից :

Այսօր, վերստին հանդէպ է ելանում մեզ խաւար ազիտութիւնը, իւր սոփեստական մեծ վայելչութեամբ : Նա դարդարված է այսօր փիլիսոփայի և աստուածաբանի անուններով . այս անգամ երեւում է նա Պ. Չամուռեանի կերպարանքով.....⁽¹⁾

Եթէ վատութիւնը, ձեռնածուների արկղի նման, երկու յատակ չունի, ապա ուրեմն Պ. Չամուռեանը հասել է մինչեւ վատութեան յատակը :

Երեւակի վերոյգրեալ տետրակը մեզ ուղարկողը գրումէր, թէ Պօլիս ամէն տեսակ մարդերից ցուրտ ընդունելութիւն է գտել այդ գրուածքը . իսկ մեր վերայ այդչափ ևս տպաւորութիւն չգործեց, և եթէ այսօր, այդ մասին մի երկու տող գրելու զիջանք, այդ Պ. Չամուռեանին պատասխանելու համար չէ, այլ ընծերցող հասարակութիւնը յարգելու : Պարոնի վայր ի վերոյ աղճատաբանութիւնքը ստոր էն ամենայն տեսակ

(1) Տես Երեւակ, Թիւ 37, $\frac{1860 \text{ 1 օգոստոսի,}}{1861 \text{ 1 յունվարի}}$ հին սճով, զոր

տնօրինէ և յօրինէ Պ. Յովհաննէս Տէր Կարապետեան Տէրոյ-էնց Չամուռեան Պրուսացի :

քննութենից և Մեղուիև և Պ. Այվատեանին մեր շնորհակալութիւնը յայտնելով, չենք կարող, մի և նոյն ժամանակ, չյայտնել մեր առ ի սրտէ կարեկցութիւնը Պ. Չամուռեանի գրուածքին պատասխանելու խորհրդով կորուսած ժամանակի վերայ :

Ինքնակոչ փիլիսոփայի գրուածքը ծայր ի ծայր կարդալով, երկու շարժառիթ տեսանք, որ կարապետել են Պարոնին դէպ ի այդ վիճը :

Առաջին, երբ մեր փոքրութիւնը ոտք կոխեսց Պօլիս, աղգային լրագիրները մի երկու տող գրեցին մեր մասին, մանաւանդ արեւելեան միանգամայն և նահապետական հիւրասիրութենից ⁽¹⁾ շարժված, քան թէ պարտականութենից դէպ ի մեր արժանաւորութիւնը, որ բնաւ պահանջողութեան յանդգնութիւն չունի :

Այդ հրատարակութիւնքը, անշուշտ, աղգի մեծագոյն մասին վերայ բնաւ աղղկցութիւն չգործելով, երեւումէ

(1) Մեք չենք կարող բառ դտանել, Պօլսի աղգայինների մեզ ցոյց տուած համակրութեան մասին, մեր առ ի սրտէ անկեղծ շնորհակալութիւնը յայտնելու : Առումենք որ մեր սիրտը զգայ և իւր լեզուով խօսի, այսպիսի դիպուածներում նորա խօսքը թէ և ուրիշին անլսելի, բայց, ըստ ինքեան աւելի վսեմ է քան թէ մարդկեղէն բարբառը : Մեզ եղած հիւրասիրութեամբ մեք աւելի երջանիկ ենք քան թէ այն արկածախնդիր կրօնաւորը երբ Բոսֆօրի վերայ դանուած մի տան դատիկոնից, հաւաքումէր շողենաւի մէջ, գնալու միջոցին, արմենուհու հրաժարական ժպիտները և օղային համբոյրները և սիրու քաղցր յիշատակներով ամրապնդված ուղղվումէր դէպ ի Տաւրիկ

Թէ նետի նման ծակել են չխոստովանված փիլիսոփայի
անձնասիրութիւնը :

Մեր սրտի խորքից ցաւումենք, որ մեր անունը, Թե-
րեւս առանց մեր կամքի և զխտութեան, մի այդպիսի
վիշտ է պատճառել Պարոնին. միւս կողմից չափաւոր-
վումէ մեր սրտի ցաւը, տեսանելով որ Պարոնը փա-
րատել է, կամ գէթ աշխատել է փարատել, իւր սրտի
ցաւը խոշոր և զեղջուկ հայհոյութեամբ :

Ինչ որ մեզ է վերաբերվում, այդ հայհոյութիւնների
ընդդէմ, ուրիշ բան չունինք ասելու, բաց ի այն խօսքե-
րից, որ հռչակաւոր Յօբսը զրեց մի անզլիական Լօրդի,
որ զրել էր նորան հայհոյութեամբ լցուած մի նամակ :

« Sir, ձեր նամակը, այս ինչ Թուականից, ստա-
« ցայ : Այդ նամակը առաջեւ է այժմ, քառորդ ժա-
« մից յետոյ կը լինի քամակումս, որի մասին շնորհ
« ունիմ տեղեկութիւն տալ ձեզ. անձնանուեր

Չ. ՅՕԻՍ

Երկրորդ և աւելի բթամիտ շարժառիթը, պաշտ-
պանել չարագործ Պօղոսը և պահպանել նորա խայ-
տառակված ճակատի վերայ եկեղեցական անունը :
Որչափ ևս զրուածքի սկզբում գործ դնէ Պ. Չամուռ-
ճեանը իւր նուիրական վերացեալ և քանձրացեալ բառե-
րը, անշուշտ, կամելով վարագուրել զրելու շարժա-
ռիթը, այնու ամենայնիւ, այսօր արեւի պէս յայտնի է,
որ զրուածքի հոգին, բոլորովին քննականից դուրս,
պատկերացնումէ մի կատաղի Թշնամութիւն, եր-

կրորդ, որ գրուածքի հետեւութիւնն է Պօղոսը պաշտարանել :

Ինչ որ մեր ամբաստանված նամակի մէջ ասել ենք, նոյնը կրկնումենք այսօր և վճռաբար յայտնումենք, որ մի քայլափոխ ևս յետ կոխելու կամք չունինք, ոչ միայն Պ. Չամուռնեանի շաղփաղփելուց և իւր խորին փիլիսոփայութեան շօշափելի չքաւորութիւնը յայտնելուց, այլ և եթէ նորանից հրաւիրված Արօնական ժողովը դիմէ դէպ ի նդովքը, այդ խաւար դարերի խաւար մնացորդը, ջաղջախ եղէզը, որ շատ անգամ գաւաղան են կարծում ողորմելի մարդիկ :

Սկզբունքների համար մեզ տրված սօցիալիստ, կարմիր հասարակատեան, Փ. Փ. Ռուսսօի դրութիւնքը ընդունող, ևայլն ևայլն ևայլն ածականների վերայ միօրինակ ժպտումենք և շտապումենք յայտնել, որ չենք ընդունում ոչինչ հեղինակութիւն (autorité) և մեր ամբաստանված նամակի մէջ և ոչ անգամ մի բառ կայ Փ. Փ. Ռուսսօից : Բայց թէ երկու անգամ երկուքը չորս է ինչպէս Փ. Փ. Ռուսսօի համար նոյնպէս և իմ համար, այդպիսի դիպուածում Փ. Փ. Ռուսսօի դրութեան հետեւող չեղանք այլ ճշմարտութեան. իսկ ճշմարտութիւնը մի մարդու սեպհականութիւն չէ, թէ և Պ. Չամուռնեանը այդ մասին ևս յայտնէ իւր երեխայամիտ, անդատաստան պահանջողութիւնքը :

Յարգել և պատուել հանճարը և բանականութիւնը ուսած լինելով վաղուց, անունից երկիւղ չունինք, ոչ Ռուսսօի և ոչ Վօլթեռի, այն, պարտական իսկ ենք մեծարել և յարգել հանճարը և բանականութիւնը, այն

աստուածային քուրաները, որոնցից առաջին անգամ դուրս թուան ազատութեան կայծերը :

Այն, զիտենք յարգել ոչ միայն Օուէնը, Պրուիդօնը, Ֆուրիէն և Ֆօնթը, այլ և Շիլլերը, Գէօթէն, Ֆրիտէն, Քանթը և Հեգելը, ճնշված մարդկութեան այն անմահ բարեկամքը և անտարակոյս, Պ. Չամուռեանի աչքում հերետիկոսները և հերձուածողները : Բայց երջանկութիւն և փառք կը համարինք մեզ, միասին մնալ այդ բոլորի հետ և միասին անհաւատ և հերետիկոսկոչվիլ, քան թէ բացաչքով մեր մարդկութիւնը, մեր մարդկային ազատութիւնը և իրաւունքը ուրանալով, Պ. Չամուռեանի հետ բռնվիլ բարոյական հարիւրից և ճօճալ մի տղայ-ամտութենից դէպ ի միւս սոփեստութիւնը, մի սխօլաստիկականութենից դէպ ի միւս արեղայամտութիւնը :

Երջանիկ կը համարինք մեզ, հուշակելով մարդկային ազատութիւնը, իրաւունքների հաւասարութիւնը, որոնք ստրկացած են կամ բռնակալների կամ դարաւոր աւանդութիւնների (tradition) որ և է խաժամութ ամբօխի (և այս կերպով մարդագիր օրէնքը շեղված բնականից, ոչ Մովսէսի տախտակներից, այլ այն շաւղից որ բացումէր մարդկային բանականութիւնը) բամբասովիլ և հայնոյվիլ, քան թէ կրօնական ժողովի օրհնութիւնը վայելել Պ. Չամուռեանի շնորհակալութեան հետ, Պօղոս չարագործը եկեղեցական ճանաչելով, հարստահարութեան կողմնակից լինելու թէութեամբ :

Քնն լիցի մեզ. ոչ երբէք : Պարտաւորվածը քահանայ ճանաչելով օլիտի արհամարհենք քահանայութիւ-

նը , կամք չունինք . մատնելով չարագործը քաղաքա-
կան կառավարութեան ձեռքը , միմիայն պաշտպանու-
մենք հասարակաց իրաւունքը :

ՆՅԷ Պ . Չամուռեանը երկար տարիներով , յարա-
կցութիւն ունենալով եզութիւններէ հետ և շատ անգամ
գործիք լինելով նոցա ձեռքում , ամենայն քաղաքական
իրաւադատութեան մէջ տեսանումէ ինկվիլիցիօ , յան-
ցանքը մերը չէ , այլ իւր տգիտութեանը , որ չէ կարողա-
ցել մինչեւ այժմ ուսանել երոսպացիներէ փոքր ի շա-
տէ ազատ օրէնսդրութիւնքը :

Անգլիական պառլամենտները խաւար Նոմինիկեան-
ների ժողովները չեն , անգլիական օրէնսդրութեամբ
մարդու անձնաւորութիւնը պաշտպանված է ամենայն
կերպ , առաւել քան թէ բոլոր Ներոպայի մէջ , բայց
կան յանցանքներ , որ մահով է պատժում այդ ազատ
կառավարութիւնը :

Իսկ մեր Պօղոսի համար մահապարտութեան խօսք
արած չէինք , և վատութիւնը միայն հարկադրել էր
Պ . Չամուռեանին քաշքաշելով մեր տասածը , ինկվիլի-
ցիօն հանդէս հանել :

Թող ընծերցոյ հասարակութիւնը վերատին կարգայ
Պօղոսի չարագործութիւնքը Մեղուի մէջ և թող կար-
գայ ոչ որպէս սոսկ լուր , որ վերաբերութիւն չունէր
ընծերցոյներին , այլ որպէս մարդ և մարդկային դժա-
ցողութեամբ :

Աղջկայ կուսութիւնը խախտել , յետոյ ամուսնա-
ցնել նորան իւր մանուկ փոքրաւորի հետ , յետոյ , ստիպ-
վելով առեւանգեալ կնոջ բողոքելուց , ամուսնութիւնը

լուծել և վերստին պսակ դնել մի այլ մարդու հետ :

Մի ուրիշի ամուսնութիւն հինգ հարիւր դուռուշի համար լուծել և վերստին այլ մարդու հետ ամուսնացնել :

Յզի կինը կապել և այնքան ձեծել, որ յղացած դասակը վիժէ ևայլն ևայլն ևայլն :

Մէք սարսափումենք այս տողերը զրելով, որովհետեւ արեամբ չափ յարգումենք մարդկային ազատութիւնը և իրաւունքը, իսկ Պ. Չամուռնեանը, այս յանցանքների մօտից թէութեամբ բերվելով, ինկվիզիցիօնական է համարում Պօղոսը դատաստանի մատնելը և մտածումէ թէ այդ անտեղի և զեղջուկ բացազանչութեամբ պիտի կարողանայ բռնաբարել ազատութիւնը. խէղճ մարդ :

Մէք, մեր ամբաստանված նամակով, այդ չարագործութիւնների համար, մեր կարծիքը Պօղոսի մասին յայտնեցինք այնպէս, որ աւելի ասելու չէինք, և թէ այն բռնաբարված աղջիկը լինէր մեր քոյրը, և թէ այն ձեծված կինը լինէր մեր ամուսինը. բայց կարծումենք, թէ Պ. Չամուռնեանը այնպէս խօսելու չէր, ինչպէս այժմ խօսեցաւ, և թէ Պօղոսի չարագործութեան ենթակայ եղած լինէր իւր քոյրը կամ կինը :

Ինչի համար է այս խտրութիւնը, ինչ բանով աւելի իրաւունք ունի Պ. Չամուռնեանի սրտուելի դուստրը կամ ամուսինը, քան թէ մի վանցի լլկված և բռնաբարված անմեղ աղջիկ, քան թէ մի նահատակված կին, քան թէ մի դաւակ, որ, դեռ հրապարակի լոյսը չտեսած, սպանվումէ Պ. Չամուռնեանի վարդապետի ձեռքով և մօր արգանդից տեղափոխվումէ դէպ ի զերեզման :

Եւ այս տեսակ անասելի և անլսելի ոճիրների համար, չարագործը եկեղեցական կամ քրիստոնեայ չճանաչելը յանցանք է կամ անօրէնութիւն, ինչպէս կամի հաւատացնել մեզ Պարոնը իւր տխրայական փիլիսոփայութեամբ :

Եւ ս'վ է այն մարդը, որ պիտի փակէ մեր բերանը, այս անօրէնութիւնների ընդդէմ բողոքելուց, ս'վ պիտի համարձակի բռնանալ մեր աղատ խղճատանքի վերայ և հարկադրել եկեղեցական ճանաչել մի պիղծ էակ, որ կորուսանումէ իւր սոսկ մարդ կոչվելու իրաւունքը անգամ. Պ. Չամուռեանը, իւր փտած ու վաճառված գրիչով, թէ՛ Արօնական ժողովը իւր մտացածին իրաւասութեամբ :

Ի՞նչ ունի մեզ ասելու Արօնական ժողովը, եթէ ասենք նորան, թէ՛ Արօնական ժողովի գործը և պաշտօնը է քննել և դատել հոգեւորների այն գործերը միայն, որ ուղղակի վերաբերութիւն ունին դաւանաբանական խնդիրների :

Ո՞ր աշխարհի մէջ տեսված է, որ եկեղեցականը, քաղաքական կամ քրէական յանցանքների համար դատուի կրօնական ատենի առաջն :

Մեր բողոքումենք, մինչեւ այժմ Հայոց մէջ եղած այս անկարգութեան ընդդէմ: Մեր հոգը չէ, եթէ այդ կտորը սխալմամբ անցած ևս է Սահմանադրութեան մէջ. (1) դորա հակառակ դարձուցանումենք անզի ու-

(1) Այս տողերը գրելու ժամանակ մեր ձեռքում չունէինք

շաղրուծիւնը այս բանի վերայ և խնդրումենք սրբա-
գրել, եթէ յիրաւի առանց բացատրութեան ասված է,
թէ Եկեղեցականների դատը պատկանումէ կրօնական
ժողովի տեսչութեան: Եկեղեցականը, քաղաքական
և քրէական գործերի պատճառով պիտի դատվի քա-
ղաքական և քրէական ատեանների առաջև, միայն
կրօնական ժողովի կողմից մի պատգամաւորի ներկա-
յութեամբ, որ հարկ դիպուածում պաշտպանէ պար-
տաւորվածի իրաւունքը, եթէ քաղաքական կամ քրէա-
կան ատեանները հակին դէպ ի անարդարութիւն:

Սւ մի՞թէ Եկեղեցականը, գողութեան, անառակու-
թեան և սպանութեան համար պիտի յանդիման լինի
կրօնական ատենի առաջև, մի՞թէ այդ կրօնական ատեանը
գողութիւնը, անառակութիւնը և սպանութիւնը
պիտի համարէ կրօնական խնդիրներ, ուրեմն և կրօ-
նական ժողովի դատաստանին ենթակայ. մի՞թէ այդ
յանցանքները գործող Եկեղեցականը հոյն պատիժը կրե-
լու չէ, ինչ որ պիտի կրէր մի աշխարհական: Սյդպիտի
դիպուածում, Եկեղեցականութիւնը չէ դառնում ար-
դեօք մի ապաստանարան, ուր կարելի էր ամենայն
անօրէնութիւն գործել անպատիժ: Սւ եթէ այդպէս
պատահի, ճախողակի, այնուհետեւ այդ Եկեղեցակա-
նութիւնը պիտի դատաւոր նստի ուրիշի խղճմտան-
քին պիտի յանդգնի բերան բանալ, մարդ խրատել,

Սահմանադրութիւնը և մեր յիշողութիւնը դ լացաւ մեզ օգնել,
լստ որում Պօլիս, ճանապարհի վերայ, մի անգամ դէ՞ կար-
գացինք այդ վրկարար կանոնադրութիւնը:

իրաւասութիւն բանեցնել: Ողորմելի է այն մարդը, որ պիտի ընդունէ այդպիսի եկեղեցականութիւնը:

Մեր համար, օրէնքի և իրաւունքի առաջև, ոչ եկեղեցական կայ, ծայրացեալ իրաւունքներով և ոչ անհագագ ստրուկ զրկված ամենայն իրաւունքից և արտօնութենից. երկու դիպուածում ևս տեսանումենք լոկ մարդ, բոլոր մարդկային կատարելութեններով և թերութեններով: Ուստի, մինի միատիկական իրաւունքը և պատիւը երկրորդի ստրուկ համարվելու սուտ փաստի հետ միասին մեր կողմից Պ. Չամուռեանին ընծայելով, շտապումենք ասել, որ օրէնքի և իրաւունքի առաջև քննվումէ և դատվումէ նախ գործը և ասլա գործողը: Գործը զնահատելով կարելի է վարձատրել մի առաքինութիւն և դարձեալ, պատժել և պատուհասել մի չարագործութիւն: Բայց չարագործը եկեղեցական է, մեր փոյթը չէ. մեք կը դատապարտենք նորան պատմութեան առաջև, իսկ Պ. Չամուռեանը եթէ կամի խունկ և դմուռս ծխել այնպիսուն, ազնաւ է:

Մի գործ կամ մի մարդ պաշտպանելու կամ դատապարտելու ժամանակ մեք հիմնվումենք մի միայն այն անխախտելի հիմքերի վերայ, որ ազատ իրաւունքը և առողջ բանականութիւնը թելադրումէ. հետեւաբար ոչինչ կանխակալ կարծիք, ոչինչ սրբացուցած աւանդութիւն չէ կարող արգելք լինել մեզ:

Աշխարհի պատահական կոչումները և պատուանունները չեն կարող օրէնքի և իրաւունքի առաջև միջնորմն լինել յանցանքի և հատուցումի մէջ, որովհետև այս հատուցումը, վերստին կրկնումենք, մի լոկ վրէժխըն-

դրութիւնն չէ, այլ հասարակաց իրաւունքի պաշտպանութիւնն :

Հոգեւորականութիւնը, օրէնքի և իրաւադատութեան առաջն չունի այն միատիկական խորհուրդը, ինչ որ ունեցած տեսանումենք Պ. Չամուռեանի համար :

Հոգեւորականք նախ և յառաջ քաղաքացի են և ապա հոգեւորական, ուրեմն, որպէս կցորդ քաղաքական իրաւունքների, պատասխանատու հասարակաց օրէնքի առաջն :

Մարդկութեան զլխից անցածը ուսուցել է մեզ, որ ամենայն իւր մէջ միայն փակված և կենդրոնացած կացութիւն, սկսած Յզիպտոսի քուրմերից մինչև Պիոս եօթերորդի ձեռքով վերականգնեալ Պ. Չամուռեանի հոգեհարազատքը, վլաս տուեցին մարդկութեան : Այդ կացութիւնքը, կտրված բաժանված հասարակաց մարմնից, ոգեւորված դժոխային եսականութեամբ բռնաբարեցին ուրիշները և յափշտակելով նոցա ազատութիւնը դօրացուցին իւրեանց չարաչար գործադրութիւնը ազատութեան :

Այնուհետև մարդիկ ընկան բարոյական գերութեան մէջ, այն է, մտքի և բանականութեան գերութեան մէջ, ուր մարդը համարձակութիւն չունի ինքնուրոյնաբար մտածելու, այլ դատապարտված է հետեւիլ իւր դահիճների թելադրութեան. նա ստիպված է գնալ այն ճանապարհը որ օգտակար է միմիայն այդ կացութեններին :

Այն, շատ դարեր գնացին մարդիկ այդ ճանապարհը, բայց ի վերջոյ, երբ երես առ երես հանդիպեցան և

զարկվեցան անանցանելի պատին, որ խաչաձև կտրու-
մէր նոցա ճանապարհը, կանգ առին և սկսան մտածել :
Թէ որչափ փոխված է այժմ այդ խաւար ճանապարհը,
կամ թէ որչափ մարդիկ դեռ ևս առ թարթափ զնումեն
նորանով, շատ անգամ առաջնորդված Պ. Չամուռեան-
նի նման մի աղօտ լուսով լսալտերի, այդ խնդիրը այս
տեղիս վերաբերութիւն չունի :

Բայց այս է բանը, թէ Պ. Չամուռեանը, ինչ նկատ-
մամբ արդեօք եկեղեցականների դասը աշխարհական-
ներին անմերձենալի քարոզելով, բարձրացնումէ մինչև
քուրմերի և եղութիւնների կացութիւնքը :

Ոչ բնաւ պիտի ընդունինք այս դրութիւնը, քանի որ
մեր եկեղեցականք ժողովրդի ընտրութեամբ և հաւա-
նութեամբ լինումեն եկեղեցական, քանի որ մեր եկե-
ղեցու կառավարութիւնը սահմանադրական է, քանի
որ մեր եկեղեցականներին դեռ ևս շատ բան պակաս
է եզիպտական քուրմ կամ եղութիւն լինելու համար :

Այս դրութիւնը մերժելով վերստին կրկնումենք, թէ
եկեղեցին ազգն է, իսկ հոգեւորականութիւնը սպասա-
ւոր այդ եկեղեցուն : Ազգը, ամենայն օր իրաւունք ունի,
այդ հոգեւորներից մինը իւր լաւութեան համար պատ-
վելու և սիրելու, իսկ միւսը, իւր վատթարութեան հա-
մար, դատապարտելու և պատժելու :

Մեր փոյթը չէ, եթէ, ոտքից մինչև զլուխ միատի-
կականութեամբ խմորված, Պ. Չամուռեանը նայումէ
հոգեւորների վերայ, որպէս անմերձենալի մարդերի
վերայ. մեր փոյթը չէ, եթէ միւս կողմից Արօնական
ժողովը իւր տեսչութեան սեպհական համարումէ հոգե-

483.

+

ւորների դատաստանը, մեք կրկնումենք, թէ հոգևոր
անձինք, որպէս մարդ և որպէս անդամ եկեղեցու աղատ
չեն հասարակաց ազգի անկողոպտելի իրաւասութենից
և հասարակաց ձայնը, հասարակաց բողոքը, մի հո-
գևորի անօրէն գործերից, լիակատար դօրութիւն ունի
մարդասպանը, գողը, սլոռնիկը, շունը, հարստահա-
րողը, վէսը, ամբարտաւանը, ազգատեացը և այլն և այլն
եկեղեցու բեմի վերայից չքացնելու համար :

Թող չվախենայ Պ. Չամուռճեանը, այս դատապար-
տութեան հետ ոչ երբէք յարակից է այն թատրոնական
գործողութիւնը, զգեստաւորելով և մերկացնելով իւր
քահանայական զգեստներից պարտաւորվածը :

Այդ դատապարտութեան մէջ, որպէս նաև դատավե-
ճիւղը գործ դնելու մէջ, պաշտօնակատար է մի միայն
խղճմտանքը և իրաւադատութիւնը :

Այս խօսքերը ասելուց յետոյ ամենայն իրաւունք
տալիս ենք Պ. Չամուռճեանին, կամեցածի չափ, մաշ-
տոցի կամ սուրբ գրքի խօսքերը քաշքաշելու :

Միա կողմից, կրօնական ժողովը, եթէ ստուգիւ, և
ոչ որպէս խրճուղակ, ⁽¹⁾ կայ մի այդպիսի ժողով, ապա
ուրեմն նա կազմված չէ հոգևորների անարժանութիւնքը
քօղարկելով ժողովրդի գայթակղութիւնը դօրացնելու

(1) Այս խօսքի վերայ դարձնումենք Պ. Չամուռճեանի մաս-
նաւոր ուշադրութիւնը և շտապումենք ասել, որ չկամէինք
խարտաւիլակ ասել, որպէս առաջին անգամ չկամէինք խըր-
տուիլակ ասել, թէ և Պարոնը այն սպաղրական սխալը մա-
տին փաթեթ էր շինել :

համար, նա կազմված չէ անիրաւութիւնը պաշտպանելով, հարստահարված ազգին թշուառութեան մրուրը մինչև տակը խմեցնելու համար, այլ այգի ապակօնող աղուէսները բռնելու և հօտը գիշատող գայլերը ջնջելու համար :

Ազգը չէ հոգևորների համար, ուրեմն և ոչ կրօնական ժողովի համար, այդ գաղափարը թող հանեն միանգամ իւրեանց մտքից, այլ հոգևորը և կրօնական ժողովը եղած են և կան ազգի համար, և նոցա յարուցանողը, պահողը և դարմանողը ազգն է դարձեալ :

Անցան այն ժամանակները, երբ մարդիկ ոգևորվումէին վերացական և միստիկական բաներով, անողորբելի իրական աշխարհը, երկաթի գաւազանը ձեռքում, պահանջումէ իւր արդարացի հարկը : Մարդկութիւնը կապված է երկրագունդի հետ. փորձերը ուսուցին նորան, իւր երջանկութեան և թշուառութեան պատճառները գտանել երկրագունդի վերայ :

Անցան և անդառնալի անցան այն խաւար օրերը, երբ մարդիկ երջանիկ էին համբուրելով մի սևազլխի քղանց կամ շատ անգամ դոշաքաղութեամբ և սլոսնկութեամբ ապականված մի ձեռք :

Ո՛հ, ինչ սարսափելի վի՛հ կայ այն անցած օրերի և այժմուս մէջ : Այս բոպէիս այդ մարդիկը քաջ գիտելով, որ արժանաւորութեամբ չեն կարող շահիլ ազգի համակրութիւնը, փորձ են փորձում բռնանալու նոցա վերայ, կոսլիտ ուժի օգնութեամբ, կամ իւրեանց խաւար ատմօսքերի մէջ նղովքի փայլակներ փայլատակեցնելով :

Երանի այն մարդուն, որ իւր անձը և գրիչը կը նուիրէ դոցա անբնական իշխանութիւնը աղգի վերայ պահելու համար, երանի, որ կաշխատի ճնշեալ ժողովրդի իրաւունքը խապառ ոտքի տակ առնելու համար :

Վայ մեզ, որ ոչ երբէք պիտի արժանանանք այս երանութեան :

Փանք, ի խոնարհ, յՆւակիրտար, Պ. Չամուռճեանին

Պ. Չամուռճեանի և մեր գրուածներից պարզ երեւումէ, որ մեր երկուքի ճանապարհը այլ է բոլորովին, և սոքա այնպիսի ճանապարհներ են, որ ոչ բնաւ հանդիպումեն միմեանց :

Մեր նուիրական պարտականութիւնն է, որչափ մեր ոյժը կը տանի, սպասաւորել մարդկութեան, քանի որմիասին ասլրումենք երկրագունդի վերայ. խոստովանումենք մեր տկարութիւնը, որ չենք կարող բաժանվիլ երկրագունդի մակերևութից :

Պ. Չամուռճեանը, գտանվելով երկրագունդի վերայ, ասլրումէ շատ հեռի նորա մակերևութից. երկիրը փոքր է նորա մեծութեանը տանելու համար : Շէկսպիրը, Համլետի բերանով, բանդ է անուանում երկիրը և մընումէ դարձեալ երկրի վերայ, իսկ Պ. Չամուռճեանը թռչումէ նաև Օրիօնից բարձր

Գիտենք, դարձեալ պիտի պար գայ Հերոդիադան, դարձեալ պիտի աշխատութիւն յանձն առնու Պ. Չամուռճեանը իւր պառաւական հերեթիկոս եւ անհաւատ խօսքերը մեր համար գրելու. այդ նորա միակ աղղու

դէնքն է, հասարակաց խոստովանութեամբ սեպհա-
կանված :

Այդ դէնքը, մինչև մեզ հասանելը փշրվող է, ուստի
և կարող մի միայն մեր հեզնական ժպիտը շարժելու .
միւս կողմից շատ աւելորդ չէ յայտնել, թէ կուրուծեան
և բռնակալութեան մէջ, այն, հաւատ չունինք, հաւա-
տալով, որ Աստուած ազատ է և առաջին լոյս . ուստի
և ամենայն հաւատ դէպ ի նա ազատ խղճմտանքով և
զիտակից ազատութեամբ :

Կարկատած արեղայական խօսքեր, հաւատացնու-
մենք, որ ժանգոտ փարայի արժէք չունին մեր
տէքում :

Ահաւասիկ մեր կանգնած ենք այժմ, բաց հրապա-
րակի վերայ և, թշնամիների դէնքերից անխոցելի մնա-
լու ակնկալութեամբ, պատնէշ չենք կանգնեցնում մեր
առաջև դանազան սուտ սկզբունքներ, սովեստական
զաղափարներ, որոնց չենք հաւատում, որ չենք ընդու-
նում և որ մերժում ենք միահամուռ : Մէք խօսում ենք
պարզ, այնպէս, ինչպէս առանց կարմրելու կարող
էինք մեր բանականութեան հաշիւ ու համար տալ մեր
ասածների համար : Բայց և այսպէս ոչ երբէք արգե-
լառի՞ծ ենք Պ. Չամբուռեանին, որը եօթը ճանապարհ
կատարել Բիլուարտի աստուածաբանութենից դէպ ի
Թեսալոնսի փիլիսոփայութիւնը, և այս վերջնից դէպ
ի առաջինը :

Մէք ազատակամ նուիրեցինք մեզ հասարակ ժողո-
վրդի իրաւունքը պաշտպանելու : Մեր անձը և զրիչը
չնուիրեցինք հարուստներին, նորա իւրեանց արծաթի

Թումբերի տակ միշտ անխոցելի են, նաև բռնակալների իշխանութեան մէջ :

Բայց այն խեղճ Հայը, այն հարստահարված, ողորմելի, աղքատ, մերկ և քաղցած Հայը, ոչ միայն ճնշված օտարներից և բարբարոսներից, այլ և իւր հարուստներից, իւր հոգևորներից և, կիսազրազէտ, ուսումնական կամ Փիլիսոփայ ասվածներից, ահա այն Հայը ամենայն արդարացի իրաւունքով զրաւումէ մեր ուշադրութիւնը և նորան դարձեալ, սուանց և վայրկենական երկմտութեան, նուիրեցինք մեր բոլոր կարողութիւնը :

Պաշտպանել այն Հայի առաժուր կոխված իրաւունքը է մեր կեանքի բուն խորհուրդը և նպատակը : Եւ այս նպատակին հասանելու համար չէ պիտոյ ընկրկինք ոչ քանտի և ոչ աքսորի առաջև, ոչ միայն բանիւ և զըրչով այլ և զէնքով և արիւնով, եթէ մի օր արժանի լինինք զէնք առնուլ մեր ձեռքը և մինչև այժմ քարոզած ազատութիւնը նուիրել և սրբել մեր արիւնով :

Ահաւասիկ մեր դաւանութիւնը, որի մէջ տեսանումենք ազգի վրկութիւնը :

Քրքրելով մեր անբաղդացած ազգի թշուառութիւնների տարեզիրքը, ինչ ենք տեսանում :

Ո՛ր տեղ մի գայթակղութիւն, որի պատճառը չէր եկեղեցական, որ տեղ հարստահարութիւն, որի հերոսը չէր եկեղեցական, որ տեղ խռովութիւն, որի խմորը չէր եկեղեցական :

Այո՛, ժամանակը լցված է, ուստի և հրապարակի առաջև ասումենք. տէրութենական լրտես — եկեղեցական, ազգը մատնող և դաւաճանող — եկեղեցա-

կան, փառքի և պատուանշանի համար, թողունք նիւ-
թական կողոպուտը Աստուծոյ թունաւորող —
եկեղեցական, եկեղեցի կողոպտող — եկեղեցական,
չարաչար արբեցութեան համար պատուհասովելուց
փախչելով, իւր եկեղեցուն դրժող և դէպ ի պապա-
կանութիւն դիմող — եկեղեցական, կասկածիկոս չընտ-
րովելու համար հաւատն ուրացող — եկեղեցական,
հրապարակեալ ճակատանութեան մասին դատաստա-
նից խիժալով վեղարը գետնին դարկող, կրօնաւորա-
կան կարգը ուրացող և մինչև իւր անասնական կեան-
քի վերջը բողի հետ կենակից — եկեղեցական, դժու-
րոցների գումարը անհետացնող — եկեղեցական, ի
վերջոյ ամէն բան, եկեղեցական, վասն զի ձանձրալի
է մի ըստ միտջէ թուել :

Իրաւուք չունէր արդեօք Հիւսիսափայլը Հայոց եկե-
ղեցու ոտքից մինչև գլուխ բեֆօրմը պահանջելու :

Այո՛, մի տեսակ մարդիկ, կարծելով, թէ Հիւսիսա-
փայլի խնդրած վերանորոգութիւնը վերաբերվումէ դա-
ւանաբանութեան, թև առին ու թռան, ո՛հ, ո՛հ, Հիւսի-
սափայլը բողոքականութիւն է խնդրում գոչելով :

Հիւսիսափայլը կրօնական օրագիր չէ և դաւանաբա-
նութեան հետ բնաւ վերաբերութիւն չունի: Նորան հե-
րիք է, և իւր պարտքը լի կշռով կատարած պիտի հա-
մարի եթէ կարողանայ երկրայինը միայն քարոզել,
աստղերից վեր չկայ Հիւսիսափայլ: Աւր թողունք որ
Հիւսիսափայլը ասած էր թէ հարկաւոր է որ այս բե-
ֆօրմը կատարվի ինքնուրոյնաբար, հետի մնալով պա-
պական և բողոքական եկեղեցիներից :

Արօճական հաւատալիքը, վերացական բաներ լինելով, այլ և խղճմտանքի սահմանի մէջ ամփոփված, պիտի վերանորոգվին կամ հնանան իւրաքանչիւր անձին սրտի և հոգու մէջ լրացեալ ազատութեամբ: Ոչ ոք իրաւունք չունի բռնաբարել ուրիշի խղճմտանքը և սրտի ազատ խոստովանութիւնը և Հիւսիսաւիսայրը, համարձակվումենք այսօր ասել, ազատամտութեան կողմից վերջին օրագիրը չլինելով, ոչ երբէք ներած է ինքեան և ոչ բնաւ պիտի ներէ ուղղել իւր հայեացքը մի այնպիսի կէտի վերայ, ուր մի ուրիշի ազատութիւնը բռնաբարել կամ գէթ սահմանաւորել կեննադրուէր:

Հիւսիսաւիսայրի խնդրած բեֆօրմը վերաբերվումէր եկեղեցական կառավարչութեան, բեֆօրմ, որով պիտի սանձահարվէին ոչ միայն Պօղոսը և Նիկողոսը, որոնց մասին Հիւսիսաւիսայրը բողոքած է ժամանակ առ ժամանակ, այլև շատերը... . . . այլև Երուսաղէմի միաբանութիւնը: (1)

(1) Լսումենք, թէ Երուսաղէմի միաբանութիւնը մի տեսակ է հրատարակել Մեղուի (Պօլսի) և Միւնասիի ընդդէմ: Գուցէ այսուհետև դժուար լինի այդ օրագրերի արգոյ հրատարակողներին, իւրեանց օրագրի մէջ, պաշտպանել իւրեանց սրտի վկայութիւնը, խիթալով կրօնական ժողովի յարձակմունքից: Այդպիսի վատաբաղդ դիպուածում Հիւսիսաւիսայրի էջերը բաց են նոցա համար. ուր մնաց որ Լոնդոնում ևս դրված է արդէն հայկական ազատ տպագրութեան համար մի մամուլ: Լսումենք թէ Փարիզ լրագիրը մանրամասն տեղեկութիւն պիտի տայ այդ տպարանի մասին, որ մի նոր առհաւատչեայ է ազգի յառաջագիմութեան, թերևս Անգլիացոց ձեռքով:

Պ. Չամբուռեանի կարկատած աստուածաբանութեամբ եկեղեցականներն գործերը պահվումեն Արօնական ժողովին, այսինքն, նոյն իսկ եկեղեցականներին, և ազգը իրաւունք չունի այդ բաների մէջ խառնվելու, որովհետեւ եկեղեցին կազմողը է ազգը, որովհետեւ եկեղեցին ազգինն է. հրաշալի լօգիկա :

Ո՛չ երբէք, ո՛չ բնաւ :

Մինչ իսպառ բողոքելով, մինչև այժմ եղած հոգեւորական չարաչար կառավարութենից և Հիւսիսափայլի խնդրած Րէֆօրմը յետ չառնելով կրկնումենք այսօր նոյն պահանջողութիւնքը :

Այո՛, Րէֆօրմ խնդրումենք այն սկզբունքների մէջ, որոնցից կախված են հոգեւոր մարդերի որ և է պաշտօն ստանալը :

Րէֆօրմ պահանջումենք եկեղեցու տնտեսական կառավարութեան մէջ, որպէս զի այսուհետեւ գէթ եկեղեցական գանձերը չյափշտակվին, չգողացվին և եկեղեցական ոսկի և արծաթի սպասքը հրէայ ոսկերիչների քուրաների մէջ չհալվին

Րէֆօրմ պահանջումենք հոգեւոր իշխանների և առհասարակ եկեղեցականների դէպ ի ազգը ունեցած յարաբերութեան մէջ : Պարտական են նորա ուղղել իւրեանց ընթացքը . մինչև այժմ, վարձկան պորտաբոյժ և ոչ հովիւ հօտաբոյժ, մինչև այժմ նոցա համար բողոքել է մարգարէն. « Ո՛հ հովիւք, որք դանձինս արածէք և ոչ զխաշինս : »

Րէֆօրմ պահանջումենք եկեղեցականների կրթութեան և դաստիարակութեան մէջ : Քահանայ ունինք,

որ կարողալ չզիտէ. քահանայ ունինք, որ հայերէն չէ կարող խօսել :

Բէֆօրմ պահանջումենք եկեղեցականների ձեռնադրութեան պայմանների մէջ, մինչեւ այժմ « Առ մեղանալէտ առ ամենայն կացութիւն մարդ, պիտանացու դատի առ հոգեւորականութիւն » ⁽¹⁾ մինչեւ այժմ Սիմոնականութիւնը վերջին տեղը չունի

Բէֆօրմ պահանջումենք առ հասարակ եկեղեցական կառավարութեան մէջ, որ խառն ի խուռն և անկարգութեամբ յառաջանալով, մեծ մասով պատճառ է եղել ազգի դարաւոր թշուառութեան :

Այս վերջին պարբերութեան ընդդէմ, մասնաւորապէս, պիտի եռ գան դարձեալ ախտերը, պիտի դարձեալ կրկնեն նոյն բանը, ինչ որ վաղուց արդէն լսումենք դանազան հոգեւորներից, թէ նոցա արդիւնքն է որ Հայոց ազգը ապրումէ մինչեւ այժմ աշխարհի երեսին :

Եթէ կան մի տեսակ մարդիկ, որ ընդունումեն այս սնտտի պարծանքը եկեղեցականների, ոչ միայն չկատարած այլ և երազում անգամ չտեսած, գործի մասին, մեր փոյթը չէ. մեք մեր կողմից հոգու ամենայն զօրութեամբ մերժումենք եկեղեցականների այդ մտացածին արդիւնքը և խնդրումենք գործ ցուցանել մեզ :

Ինչո՞վ պահեցին ազգը, դպրոցներնով, մատենա-

(1) Ի նամակէ մերմէ առ Վեհափառ Կաթողիկոսն ամենայն Հայոց, որ ի 11 էն Փետր 1860 ամի, ի Ս. Պետերբուրգ քաղաքէ :

գրութեամբ, քարոզութեամբ, ընկերութիւններով, ուր
են ապա այդ բաները, ուրեմն ինչով..... և վերստին,
ինչով:

Այս բոլորի հակառակը ապացուցանելու համար
փաստերը մեր ձեռքում կանգնած ենք և այսուհետեւ
Հայի պարտականութիւնն է անխնայ հանդիպել հոգե-
ւորներին. որովհետեւ յետախաղացութեան և ուէակ-
ցիօի անպարծանք դրօշները նոցա զլխի վերայ են
փողփողում մասնաւորապէս:

Մեր դրօշը յայտնի է արդէն.....

Եթէ Հայոց ազգը իւր կրօնը պահելով մնաց աշխար-
հի երեսին, այդ մասին շնորհակալութիւն Մահմետա-
կանութեան. սա բացասաբար պահպանեց Հայերի
կրօնը: Ազգը որչափ ևս թաղված լինէր խաւար տգի-
տութեան մէջ, այնու ամենայնիւ, եթէ մի մասը զի-
տակցութեամբ, միւս և աւելի մեծ մասը, Ֆանատիկո-
սութեամբ հեռի մնալով Մահմետականութենից, պա-
հեց իւր կրօնը, հետեւաբար և ազգութիւնը:

Թող Հայոց ազգը, իր թագաւորութեան կործանման
օրից, ստրկանար որ և է Քրիստոնեայ կառավարու-
թեան, այն ժամանակ կը տեսանէինք... բայց ինչպէս
պիտի տեսանէինք. վասն զի մեք ևս ծնելու չէինք որ
պէս Հայ:

Անի քաղաքի կործանվելուց յետոյ Հայերը Լեհաս-
տան գաղթեցին անագին բազմութեամբ, եթէ նոցանից
մի մասը փրկվեցաւ և այսօր հայութեան անունը կը-
րում է իւր նակատի վերայ, շնորհակալութիւն Արիմի
Թաթարներին: Իսկ միւս և աւելի մեծ մասը, որ մնաց

Լեհաստանում, ուր է, իւրեան եպիսկոպոսներով և քահանաներով: Լեհաստանի մէջ մեր ճանապարհոր-
թութեան միջոցին (1859) շատ անգամ սրատանեցաւ
մեզ տեսանել հոյակապ, բայց այժմ ամայի, հայկա-
կան եկեղեցիք, իսկ Հայ և ոչ մի հատ, ինչ եղան, ուր
գնացին:

Հոգեւորականութիւնը իւր տղայական խնդիրներով,
եզութիւնների ձեռքում գործիք դառնալով, ճշակտոր
հանեց ազգը, անդարձ կորուց նորան, հեռեւաբար և
ամենայն արդարութեամբ ինքը ևս կորաւ ու չքացաւ
Լեհաստանից:

Եթէ հոգեւորք ընդունակ էին ազգը պահելու, ինչո՞ւ
չպահեցին այս գաղթականութիւնը Եւրոպայի մէջ,
ուր աւելի հնար կար լուսաւորութեան: Ո՞վ հանեց
այն ազգակործան կռիւները, Մեղհուն, Միւնասիւն,
Նալբանդեանցը: Մովսէս, Մելքիսէթ և Եղիազար
կաթողիկոսների կամ կիսասիրտ կամ թէ ասել երկդի-
մի գործերը և ընթացքը, միւս հոգեւորների վասակու-
թիւնը, որոնց մէջ Մեհրութեանեան պսակով փայլումէ
Նիկոլ, չիք եպիսկոպոսը, սոքա ամենը միասին, ոմանք
կամքով և զիտութեամբ իսկ ոմանք ակամայ և տգի-
տութեամբ գործակից եղան շուտ գաղթականութիւնը
կորուստի անդունդը զլորելու:

Ո՞վ Հայոց ազգը իւր շահաստացութեան և սրատուա-
մոլութեան համար երկրից երկիր գաղթեցնելով մի
կէսին սրատուաւ եղաւ մահի, օղի և կեանքի հան-
գամանքներին անսովորութենից, իսկ միւս կէսին
աղքատութեան և ստրկութեան սանդուխքի ա-

մենաբարձր աստիճանին վերայ ոտք կոխելու

Այս բոլորը պատմական ֆակտեր լինելուց յետոյ, դեռ ևս հոգեւորականութիւնը պիտի պարծի թէ անզգ պահեց :

Մեր այս խօսքերը, հոգեւորների ընդդէմ, չէ վերաբերվում մեր տօնելի թարգմանիչներին կամ նոցա հետեւող փոքրագոյն մասին :

Ինքեանք, այդ սուրբ թարգմանիչքը, աքսորվեցան և հալածվեցան մինչեւ ի մահ ընդհանուր հոգեւորականութեան ձեռքով :

Սնկելի Սորենացին, այն հրեշտակ ձերունին չարաչար հալածվեցաւ, որին ի վերջոյ Բագրեւանդի Եպիսկոպոսութիւնը, որպէս մահադեղ տալով, անհանգիստ հալածանքով վախճանեցուցին և որ, իւր վախճանի ժամանակ, անաւոր նզովք զրեց Հայոց կաթողիկոսի վերայ :

Հայոց եկեղեցականութիւնը և մահով չհաշտվեցաւ այն պատկառելի ձերունու հետ. նորա ոսկերքը փորեց հանեց գերեզմանից ու գեալ թափեց :

Ղազար Փարպեցուն ոտքը բոբիկ քշեցին վանքից, որ, Մամիկոնեանց Տիրոջ Վահանի յանձնարարութեամբ բարեկարգել էր, իւր սեպհական ունեցած չունեցածը ծախելով: Վանքից հալածելու ժամանակ, նորա բոլոր ինչքը յափշտակեցին, նաեւ յունարէն գիրքերը, թէ և մարդ չկար վանքում յունարէն կարդացող :

Սոսրովիկը, դեռ ևս Հայաստան չմտած, էրբ լսեցին թէ գալիս է, փրփրեցան նախանձով և վառեցին բորբոքեցին իւրեանց հալածանքը, մինչեւ որ հայրե-

նիքի անձուկով այրված տոջորված երիտասարդը, որ աշխարհից աշխարհ գնացել էր բան ուսանելու, ազգը լուսաւորելու համար, լսելով այս մահաձայն աղեղների դոնչիւնքը աղօթեց առ Տէր և վնարեց իւր կեանքը, որի և ոսկերքը օտարք և ոչ մէք արժանի եղանք ընդունելու :

Մորենացու տղիտանալած մատեանները Փարսաղիկեա անունով հռչակեցին, իսկ Ղազար Փարսեցին աղանդաւոր :

Փարսեցին, այս բոլորը մանրամասն պատմելուց յետոյ ⁽¹⁾ գեղեցիկ նկարագրումէ Հայոց եկեղեցականութիւնը, նաեւ հինգերորդ դարում, երբ բան է լուսաւորութեան մասին :

« Առ դառնաշունչ նախանձու իւրեանց, որ բունեալ
« է ի նոսա... պատանեալ և քօղարկեալ երեսօք
« նստին, որպէս առ հոտեալ դիական, պատանձեալ
« իբրեւ զհամր դե : »

Այս տխուր պատմութիւններից յետոյ, մեր գէմքը դարձնում ենք դէպ ի Արօնական ժողովը և իբրեւ անդամ ազգի և եկեղեցու առաջարկում ենք նախ, հասկանալ և ընդունիլ, որ հոգեւորականութիւնը մի տեսակ արհեստ չէ նիւթական կեանքի պիտոյքը հայծայծելու համար և թէ կամի նա խորհուրդ ունենալ, ապա ու-

(1) Թուղթ Ղազարայ Փարսեցուց, առ Վահան Տէրն Մամիկոնէից, տպեալ ի Մոսկվա, 1833. աշխատութեամբ և քննութեամբ Պ. Էմինի : Յաւոււմ ենք որ մեր հետ չունինք այդ գիրքը, որպէս զի մի երկու էջ կարող լինէինք արտազրել այս տեղ Պ. Չամուռճեանի և եկեղեցականների հոգեւոր մխիթարութեան համար :

րեմն սլարտական է սպասաւորել ազգի յառաջադի-
մութեան :

Երկրորդ, նոյնը հասկացնել իւր իրաւասութեան տակ
եղած եկեղեցականներին , որպէս զի իւրեանց ըն-
թացքը յարմարեցնեն այս գաղափարին :

Երրորդ, սաստիկ պատուէր տալ բոլոր եկեղեցա-
կաններին , առանց աստիճանի և պաշտօնի խտրու-
թեան , չհամարձակվիլ ձեռք վերցնել կամ գաւազան
բարձրացնել Հայոց ազգի զաւակները գանակոծելու
և գիշատելու համար . (տես Մեղոռ Ք. 127) այդ հոգե-
ւորականութիւն չէ այլ անարգ դահճութիւն : (1)

(1) Մեք այդ ժպիրհ ընթացքը հոգևորների նկատեցինք
նաև Էջմիածնի մէջ : (1860. Հոկտեմբեր) : Մի առաւօտ,
սինեկիս առաջեր բարձրացած սաստիկ աղմուկից և աղաղա-
կից ստիպված դուրս եկայ պատճառը խմանալու համար :
Յաւելով տեսայ, որ երկու ծախսարար արեղայք ծեծել
են տալիս մի քանի հայ մշակներ, այն պատճառով, որ այդ
մարդիկը առանց կերակրի մնալու պայմանով չկամէին աշ-
խատիլ: Խեղճ և անպաշտպան հայերի մէջքին բաւական
փայտ իջուցանելուց յետոյ, երևի թէ այս հայկական ինկվի-
զիտորների կիրքը չէր նստել, որովհետև նոցանից մինը կարա-
պետ անուն, անպատկառապէս և միանգամայն կատաղած ինքը
սկսեց աքացի և բռնցի ջարդել, արդէն գիշատվածներից, մի
խեղճ պատանի : Քիթը բերանը արիւնաթաթաւ, մաղապուր
փախաւ դահճի ձեռքից ողորմելի պատանին և վաղելով Սիւնհո-
ղոսի անդամ, սրբազան Եղիազար եպիսկոպոսի մօտ բողոքեց
եղած անիրաւութենից : Եպիսկոպոսը, անձամբ անձին տեսա-
նելով ողորմելու վիրաւոր կերպարանքը, իւր հետ առաւ այս
արիւնով մկրտվածը, (որին, կարապետը եղել էր և մկրտիչ)
և դնաց Վեհափառ կաթողիկոսի առաջ և վկայելու այս անօրէ-
նութեանը : Զախողակի, նորին Վեհափառութիւնը հիւանդ

Այս առաջարկութիւնը առնելուց յետոյ, կը սպասենք կրօնական ժողովի շրջաբերական հրամանին, յատկապէս այս բովանդակութեամբ, որ եկեղեցականք չհամարձակվին որ և իցէ դիպուածում, մարմնաւոր պատիժ գործ դնել ազգի անդամների վերայ :

Եթէ այս շրջաբերականը դուրս չգայ, այն ժամանակ, (այժմէն յայտնումենք հրապարակով) որ մենք կը հանենք մի շրջաբերական, բայց բոլորովին հակառակ բովանդակութեամբ : Նորանից ծագելու հետեւանքը, յանցանքը և մեղքը, այս օրից, դնելով կրօնական ժողովի դանցառութեան վերայ :

Այս խօսքերը ասումենք ամենայն լրջութեամբ և ծանրութեամբ : Արօնական ժողովը լսել սպասնալիք չը համարէ կամ բողոքական վաղանցուկ կրքի ծնունդ, ո՛չ, ո՛չ : Այժմ և մինչև մեր գերեզմանի ալիւ վրէժխընդիր և նախանձաւոր ենք հասարակ ժողովրդի իրաւունքը պաշտպանելու և այս խորհրդով ամենայն բանի ընդունակ :

Արօնական ժողովը կը կարգայ մեր շրջաբերականը, եթէ դանցառութեան դժբաղդութեան հանդիպի. մեք, իւր ժամանակին, առանձին ծրարի մէջ կուղարկենք նորան մի օրինակ :

լինելով, հետևաբար չկարողանալով մարդ ընդունել, եպիսկոպոսը հարկադրվեցաւ, որպէս Սիւնհոդոսի անդամ, պաշտօնական թղթով Պրօկուրորին բողոքել և խնդրել արժանի տնօրէնութիւն, որ վանականք չհամարձակվին դիմել դէպի այսպիսի հնարներ : Թէ ինչ հետևանք ունեցաւ այդ բողոքը, դեռ ևս չունինք տեղեկութիւն :

Ո՛հ, ինչ ցաւալի պաշտօններ, ինչ տխուր առարկաներ նիւթ են այսօր մեր խօսքին :

Ա՞յս էր մեր գործը :

Արիւն է կաթում մեր սրտից, երբ նայումենք ազգի ամայի և ամուլ կեանքի վերայ . աղէխարշ սրտամտմենք դարձեալ, տեսանելով, որ այս անգործութեան, ծայրացեալ թշուառութեան և կարելի եղածի չափ ստրկութեան մէջ, Հայերը դատապարտուած են օտարի գաւազանի հետ, ենթարկվիլ նաև իւր եկեղեցականների հարստահարութեան :

Բայց մինչեւ որ աստիճան բարձրանումէ այս անախորժ զգացողութիւնը, մինչ հայ մարդիկ, դարձեալ, հանդէս են գալիս եկեղեցականների մտացածին իրաւունքը շատագովելու և ազգի ստրկութեան ժամանակը յարատեւել տալու համար . մինչեւ որ աստիճան..... մեք հրաժարվումենք սահմանել :

Ազատութիւնը, այն վսեմակնն աքսորականը, վերստին և վերստին սրբված արիւնով, հրաբորբօք տառերով գրվումէ պայծառ ճակատների վերայ, իսկ Հայը և այսօր չէ կարող կատարելապէս դուրս հանել իւր ճակատը սեւ վերարկուի տակից, ուր դարերով ահա որջացել են Պարկեանք, ազատութեան բողբոջները մկրատելու համար :

Մինչեւ այժմ վերացականութեամբ ապրեցանք, որ, ուրիշ խօսքերով, ասել է մեռանք, միթէ պէտք չէր մի փոքր կեանքի վերայ ևս մտածել.....

Տարիները վաղումեն փայլակի շուտութեամբ, օրերը թռչումեն, որպէս մի վայրկեան : Աւախենումենք

և իրաւունք ունինք վախենալու, թէ մի գուցէ, մինչև
Հայր կշտանայ իւր մահանման քնից, լուսինը անդն-
դասոյդ գնայ հորիզոնից ներքև

Շատ ազգեր պատահեցան անբաղդութեան, բայց
այդ չեղաւ նոցա համար յաւիտենական մեռելութիւն :

Աքսորվեցան, կախովեցան, զլխատալեցան և այրվե-
ցան, բայց նոցա հոգին կենդանի մնաց, իւրեանց ամա-
յացած հայրենիքի փլատակների մէջ :

Հայրենիքի օղբ, սարերը և անտառները, խոր զիշե-
րի լռութեան մէջ, դարերով շշնչեցին այդ նահատակ-
ների վերջին բռակում արած բողոքների արձագանքը :

Սգնկ ձեզ, Հայաստանի սարեր, Հայաստանի ձո-
րեր և Հայաստանի նուիրական անտառներ : Այրա-
բառից մինչև Տօրոս, ստիպված էք դուք հնչեցնել մի-
այն, հեկեկանքը և հոնտիւնքը Հայաստանի որբ դաւակ-
ների, հարստահատողների և եկեղեցականների գաւա-
դանի տակից :

Ուրիշ ազգերի նահատակների ուրուականքը հալա-
ձեցին հարստահարողների կեանքը, մինչև մի ժամա-
նակ, իսկ երբ մինչև բերանը լցված էր փորձութեան
բաժակը, այնուհետև նոցա սզազգեստ ժառանգների
վերարկունների տակից դուրս շողացին պողովա-
տիկները :

Նոքա ասրեցան և քրտնեցան ընդհանուրի օգտի
համար. լաւ հասկացած լինելով : Թէ սնւտ է մասնա-
ւորի քաջաբաղդութիւնը, առանց ընդհանուրի երշան-
կութեան :

Նոքա չկաշառվեցան օտարներից . . . նոքա չնենգե-

ցին իւրեանց աղգին, նորա չվաճառեցին իւրեանց
զրիչը..... նորա արհամարհեցին օտարի տուած պա-
տիւը և աշխատեցան դժպիտի պատուանշանների տեղ
կրել իւրեանց աղգութեան անունը, այլ և վէրքերի
սպիր, որոնց արժանացել էին մարտիրոսաբար, աղ-
գի աղատութեան անունով :

Ի՛նչ մնաց մեզ մեր անցած օրերից, ի՛նչ վիճակի մէջ
ենք ներկայումս, ի՛նչ ճանապարհ է մեր գնացածը և
նոր է դորա ելքը :

Սորա են անա խնդիրքը, որ ամենայն բանական Հայ
պարտական է յուսափայլ, կացուցանել աղգի ընդ-
հանրութեան առաջն :

Լսութիւն... Պատուելի Սյվազովսքին մեր մինչև
այժմ զրածների համար ևս պատրաստվումէ Հերե-
տիկոս, անունով մեզ վերստին մկրտելու :

Բայց որովհետև, մեք երկիւղ չունինք անունից,
ուստի և ընդունումենք նաև Պ. Սյվազովսքիի սպառ-
նալիքը, Մասեաց աղանու մէջ, քննութեան տակ ձգել
Հիւսիսափայլը, սկզբից մինչև նորա վերջը ⁽¹⁾ և յան-
դիմանել նորա հերետիկոսականութիւնը :

Հրաւիրումենք, որ ասպարէզ իջանէ ⁽²⁾ բայց եթէ

(1) Հիւսիսափայլը, գուցէ Պ. Սյվազովսքիի, երևակայու-
թեան մէջ խափանված, շարունակվումէ այսօր :

(2) Այս հրաւերը առնումենք Պ. Սյվազովսքիին, մինչ արդէն
նախընթաց տարիներում քանի անգամ ամբաստավեցանք նո-
րանից Ռուսիոյ ներքին գործոց մինիստրի առաջն, որպէս
անկրօն, որպէս անբարոյական, որպէս ապստամբ և խռո-

բանը կրօնի և սրտի վկայութեան վերայ անհաստատութեան զայ, կարծումենք թէ աւելի ծանր լինի իւր պատասխանատուութիւնը. մանաւանդ եթէ գտանվին մարդիկ, որ յանձն առնուն հրատարակել Պ. Ս. Վաղովսքիի ընթացքի և գործերի պատմութիւնը⁽¹⁾ այն բոլորից

վեցուցիչ ժողովրդեան: Պ. Ս. Վաղովսքին առաջարկումէր քաջավայլ մինիստրին, Հիւսիսախաչ վնասակար օրագիրը դադարեցնել և մեզ ձգել սաստիկ պատժի տակ, օրէնքի բովանդակ խտութեամբ: Գուցէ Պ. Ս. Վաղովսքին, հայրական հոգողութեամբ պատրաստել էր մեզ տեղի բնակութեան Ներշինակ կամ Արասնօեարակ..... Մեր ջերմութիւնը մի փոքր բարեխառնելու համար Սիբիրի սառնամանիքը..... (բուն առողջապահական խորհրդով): Պ. Ս. Վաղովսքին չէ կարող ուրանալ այս իրողութիւնքը. ըստ որում երկար քննութիւնք և զրազրութիւնք եղան մինիստրերի և ցենզուրեան ժողովի մէջ, այլ և առաջարկվեցան հարցմունքներ.....

Չնայելով այս տխուր անցածի վերայ, չնայելով, որ Պ. Ս. Վաղովսքին իւր Մասեաց Աղաւնու մէջ ազատ է ամենայն բան գրելու, նաև զրպարտելու..... նաև հայհոյելու, ըստ որում նորա զրուածքը չեն քննվում ցենզուրեան ժողովի մէջ, միւս կողմից մեր բոլոր զրուածքը քննվում են և մանաւանդ խիստ, եթէ յարաբերութիւն ունին Պ. Ս. Վաղովսքիին, (ասպոյցները մեր ձեռքում պակաս չեն) չնայելով ասում ենք այս բոլորի վերայ հրաւիրում ենք, որ Պ. Ս. Վաղովսքին խօսքը բռնէ ու հրապարակ իջանէ:

(1) Սյդ հրատարակվելու պատմութենից, առ այժմ, մի փոքր ճաշակ տալու համար ընթերցող հասարակութեան, դնում ենք այս տեղ Պ. Ս. Վաղովսքիի վեց նամակների պատճէնը, որոնց բնագիրը գտանվում է Վենետիկ, Ղազարու վանքը:

Անշուշտ, այս նամանակները մի նոր լոյս պիտի ծաւալեն Պ. Ս. Վաղովսքիի խիստ բարոյականութեան վերայ, մանաւանդ եթէ յիշենք իւր ասածները, ի Յայտարարութեան անցից մուրա-

ուր դադարումէ Վ. Հայր Սարգսի Մուրատեան վարժարանի պատմութեան երկրորդ հատորը, որ գուցէ մինչև այս տարու վերջը հրատարակվի : Ո՛հ, ինչ պատմութիւն

սեան վարժարանին թէ Հ. Սարգիսը իւր վերայ շարժեց վանքի բարկութիւնը, Պ. Սյվաղովսքիին պաշտպան կալով, Հոովմի և վանքին ընդդէմ : Պ. Սյվաղովսքիի, տպագրութեամբ անըստգտանելի հռչակված Հ. Սարգիսը, մինչդեռ պատերազմումէր Պ. Սյվաղովսքիի օգտի համար, սա դրումէր Սբբային հետևեալ նամակները, որոնց մէջ բաց ի Քրիստոնէականից, բարոյականից և մարդասիրականից ուրիշ սկզբունք չգտանք :

Առ Արքայն մխիթարեան մխաբանութեան ի վեկեցիկ :

Փարիզ, 18 Նոյեմբեր 1848.

Աստուածապատիւ Հոգևոր Տէր.

..... Վ. Ստեփանոս արդ հասեալ իսկ իցէ այդր, զի ըստ գրելոյ իւրոյ առ Հ. Յովհաննէս յ8 սորին ամսոյ մեկնելոց էր նա ի Վիլիօնսոյէ : Ի նմանէ տեղեկացեալ իցէ տէրդ և բազում ինչ իրաց Վարժարանիս և խելամուտ լեալ, թէ որչափ վայրասպար զանգիտեաց ժողովս մեր երկիցս անգամ յընդունելոյ զհրածեշք բարեւասար սեչսին, (Հ. Սարգսին Թէոդորեան) և որպէս յանօգուտս, մանաւանդ թէ ի վնաս եւս իրաց Վարժարանիս, յանձն արար ի նա ընդ տեսչութեանն և զանուն մատակարարութեան դրամոց : Եւ արդ եթէ զեղեալսն չիցէ խոհեմութիւն փոփոխել, առանց կարևոր ինչ պատճառաց, սակայն թուի ինձ թէ զարժանն պատասխանի առ դրեալսն ի նմանէ (զորս ընթերցաւ ինձ) պարտ է կշռել աներկիւղ և անպարուակ բանիւք և անժխտելի փաստիւք

Աւելի դիւրին պիտի լինէր Պ. Այվաղովսքիին Հիւսիս-
ասիական մի ուրիշ բանի վերայ յարձակվիլ, բան թէ
գատապարտել նորան որպէս կրօնադրուծ :

Փարիզ, 17 Փետրեմ 1848.

..... Մի ինչ միայն Քեր. Տէր, որ փոքր մի տաղնապէզ զմիտս
իմ, այն է, զի առ հարկի այժմու հանդամանաց Վարժարանիս
ինձ անկ է ուղղակի պատասխանատու լինել առաջի միաբա-
նութեանս ոչ միայն զդաստիարակութենէ և զհրահանգաց
մանկուոյն, այլ գրեւ թէ և զընթացից Վ. արժարանիս առ հա-
տարակ. ուր եթէ կայր ոք տեսնէ արդեամբ ևս ոչ անուամբ յո-
կով որպէս զարդիս (Հ. Սարգիսն) իմ պատասխանատուութիւն
ընդ նորա ձեռն լինէր և զհանրական տեսչութենէ Վարժա-
րանիս նա տայր պատասխանի Սմին իրի և զամենայն հո-
գըս պիտոյից մանկուոյն, զկերակրոց ասեմ և զզդեատուց և ըզ-
զրոց և որ այլն ևս, իմ յանձին կալեալ է, թէպէտ և զբամոց
մատակարարութիւն լի բովանդակի ի ձեռս Վ. Հ. Յովհաննու
կայ : Զայստիկ հարկ համարեցայ զեկուցանել Վեհիդ, զի ի
փորձոյ ուսեալ կարծեմ, թէ որ անուանեալ տեսչն է Վար-
ժարանիս պատասխանս ինդրե անվեղադիր անկերոյ զիւրն ան-
գործութիւն, ևս զանկարողութիւն զմեօք արդեօք և զՁեօք մա-
նաւանդ արկանելով զամենայն զմնաստ սակաւ զարդացման
վարժարանիս, (ըստ իւրոցն խելաց) :

Ն. Մ. Հ. ԳԱՅՐԻԷԼ ԱՅՎԱՋՈՎՍԳԻ :

Փարիզ, 19 Յունուար 1849:

Վ. Հ. Սարգիս մեծաւանհամբերութեամբ թուի սպասել այտի
թղթոյ, յորմէ իմանամք, թէ աուրբք յառաջ գրեալ է առ Ձեզ.
անշուշտ նամակ ըստ ոճոյ առաջնոց նամակացն իցէ և այդ,
որպէս գուշակեմ, իմ տենջ այն է, զի մի բնաւ խռովեցջիք

Եւ նվ է այս դատապարտողը, որ արդէն երկու ան-
դամ փոխել է իւր կրօնը, որ տալազրութեամբ հրատարա-
կել է « Վաթուխի ծնած եմ և կաթուխի պիտի մեռանիմ, »

այլ խոհական խորհրդով և ազդու պատճառարանութեամբ
կշռիցէք նմա զպատասխանին, ըստ իմատու թեան Ձերում :

Ն. Ծ. Հ. ԳԱՅՐԻՅԷԼ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ :

Յ. Գ. Արդ իսկ կոչեցայ ի Վ. Հ. Յովհաննէ ի սենեակի Վ. Հ.
Սարգսի և տարեալ և ցուցեալ էր սորա նմա զմանրամասն հա-
շիւ ամենայն ելից և մտից Վարժարանիս, հանդերձ առանձին
բովանդակութեամբն և կշռով և ընդունելութեան մուրհա-
կօք : Վ. Հ. Յովհաննէս ընթերցաւ և բացատրեաց մի առ մի
զկարևորագոյնս ի հատուածոցն, և ապա ասէր — Ահա և հաշուե-
մատեանս ողջոյն, տեսէք, քննեցէք և ըստ այնմ գրեցէք առ Պեր.
Արք. և յղեցէք զբովանդակութիւնդ : Վ. Հ. Սարգիս հարեանցի
և եթ ակն արկեալ ի մատեանն ասէ, զայդ առ քեզ կալջիւր և
զհամառօտութիւնն տուր ինձ զի յղեցից ի Վանս : Յաւել Վ. Հ.
Յովհաննէս. բայց կամ իմ գիտել, թէ ո՞ր կալցի զհաշիւս այսր
և որոյ տարւոյս. զի ես ոչ ևս կարեմ վարել զպաշտօն, զոր հա-
սարակութիւնն առեալ է յինէն. իմ պաշտօն այսուհետև խոս-
տովանահայրութիւն և եթ է : Ասէ Վ. Հ. Սարգիսն. ոչ, ոչ. կալ
դու զհաշիւն դարձեալ, որպէս յառաջ, մինչև տեսից թէ զինչ
պատասխանի եկեացէ ի վանաց առ թուղթսն իմ : Եւ Վ. Հ. Յով-
հաննէս ել ընդ իս ի սենեկէն նեղասրտեալ ընդ մեղմէիս գնա-
ցրս առևն : Դսկ հաշուեմատեանն զոր տեսի, ամենայն մանր
մանր տեղեկութեամբ հանդերձ գրեալ է, որպիսի ոչ զվանացն
տեսեալ է իմ և ոչ Ռաֆայէլեան Վարժարանին, զի օրինակ
իմն և անուանք իւրաքանչիւր մատենից գնեցոց, մի առ մի
դրոշմեալ են ի նմա, որպէս և այլ պաշարք և նիւթք լիպրէիւքն
և չափովք և թըւովք ըստ մուրհակացն ընդունելութեան նշա
նակեալ մի ըստ միոջէ : Տեսցուք երկ Վ. Հ. Սարգիս արասցի

որ Տատեան Պօղոս Բէյին համար տեարակ գրելով
ներկայացել է Փարիզի Արքեպիսկոպոսին, Հայոց եկե-

նոյնպէս (եթէ ի ձեռս նորա մնացի հաշուեմատեանն) որպէս
յոխորսայ ի շինել խօսից

Ն. Ծ. Հ. ԳՍԲԲԵԼ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ :

Փարիզ, 29 Յունվարի 1849.

Ձշնորհեալն ի Վեհէդ ի 17 ամսոյս՝ ընկալաք յերեկն հան-
դերձ օրինակաւ թղթոյն (Հ. Սարգսին), որոյ խմաստք ոչինչ
անծանօթ էին մեզ դտեալ զայն անձնական եւ անար-
ժան կրիւք անխնայի խառնախօսութեամբ եւ յանդուգն ասա-
ցուածովք: Չոմանս յառաջարկութեանց նորա, որ իրաւացի
թուին և մեզ գիտեմք, զի և միաբանութիւնս ճգնի տակաւ ար-
դիւնացուցանել ըստ կարի և ըստ ներելոյ ժամանակիս, և զո-
մանս, յորոց մի է և յանձն առնել զտեսչութիւն վարժարանիս
ի ձեռս գաղղիացոյ ուրուք, ոչ միայն համարիմք ի նախա-
տինս ուխտիս, որպէս ասէ նա, այլ և ի վնաս մեծ վարժարանիս
և ազգային կրթութեան զորոյ զօրինակն ունիմք և ի վերայ
գպրոցին Վաղարեանց, սմին իրի և անգործադրելի ամենե-
ւին: — Իսկ թէ զինչ պատասխանի արժան իցէ գրել առ նա,
մեր կարծիք այս են խայսառակել միակզամայն զգնացս
նորա յիրս վարժարանիս, ոչ միայն յերկուց անաց հետե, այլ եւ
անդսին յամեն, յորում կարգեցաւ նա ուղղիչ Ռաֆայելեան վար-
ժարանին եւ սպաւ այսմ ի Պատարիոն: Բայց քանզի այր է սա
անխիղճ եւ կասաղի, շու եւս բուի գրել Ձեզ առ նա պատասխանի
զգուշաւոր բանիւք (քե) բարւոք բուեցաւ մեզ եւ ժողովոյս զի
որովհետեւ ինձ անմարթ է վասն հանգամանաց ժամանակիս
գալ այդր, Վերասպատուութիւնդ ի մեզմանալ օղոց փութաս-
ցի անյապաղ գալ այսր ի Վեհետիկ . . . եթէ յանձն առնուցու նա
գալ, բարւոք է, զի եւ վարժարանս զերծանի միակզամ ի սար-
սաւ սեսչութեան սասի որով սա զանուն եւ եք սեսչի ունելով

դեցին հռովմէական խոստովանելու համար, որ հանգամանքներից և յոյսերից բռնադատված վազել է դէս ի Հայոց եկեղեցու, ոչ երբէք փակված, զխրկը և որ, աւե-

զամենայն պատասխանատուութիւն յանձնէ ի բայ քերէ, որպէս միշտն եւ միանգամայն քշնաւուրեան աջօք հայելոյ միշտ եւ յանպարսաւ ընթացս վարժարանիս, եւ անդադար հակառակութեանքն ընդ վանացն ջլատէ զձեռս վաստակաւորաց: Իսկ եթէ յասպազելով զչուն (որպէս հաւանական թուի) չկամիցի ելանել աստի, դէթ չկարէ այլ ևս յայտնապէս ֆրքննչել ոչ ամեզ և ոչ առ Ձեզ.....

Ն. Մ. Հ. ԳԱԲՐԻԷԼ ԱՅՎԱԶՈՎՍԻԻ

Փարիզ, 19 Մարտի 1849

..... Զազդեցութիւն գրոյն Ձերոյ առ նա չկարեմք հաւատեալ գուշակել, զայս տեսանեմք և իմանամք՝ զի ուրախ է նա և աւելի ևս քան զսովորականն, և պատրաստէ զարձեալ պատասխանի, որպէս թերեւս գուշակէիքն ընդ մեզ, ոչինչ անգիտանալով զանհանդարտ եւ զկոռասուր բարս ևորս եւ զդասարկապոս շատաւորքիւն: Բարոսք յոյժ և իմաստութեամբ գրեալ էր Ձեր զթուղթն ըստ ամենայն մասանցն. բայց զարմացաք յոյժ, թէ ընդէր ոչ իշխեաց և ոչ կամեցաւ արդոյ ժողովն երկտող ինչ յիշատակ առնել ի թղթին զյանձնելոյ նորին զարձեալ զամենայն զգործ և զմատակարարութիւն վարժարանիս ի ձեռս Վ. Հ. Յովհաննու, և զհրաժարական բանիցն զորս ստէպ կրկնէ նա ի թուղթս իւր: Գիտեմք իսկ զի վրիպակ մեծ էր զոր գործեաց ժողովդ մեր, տարովն ի ձեռս Հայր Սարգսի զամենայն իշխանութիւն տեսչութեան եւ գործակալութեան, ընդդէմ իդնի իւրոյ եւ ճանաչման իրացն, գիտելով չափ զողորմելի անկարողութիւն եւ զխոնավարս բարս անգործ առնն բայց քանզի նա իրաժարեաց կամակար ի յանձնառութենէ գործոյն, ժողովդ հիմ լուիցէ..... Յայտմ ամենայնի միտիթարութիւն մեծ է ինձ զի այս կոխք եւ խոնավութիւն (որ թուի թէ ոչ դադարեացին իսկ մին-

լին ասեմ, լուսաւորչական Հայերի առաջնորդ կարգ-
վելուց յետոյ հրատարակել է, Հայոց եկեղեցու հակա-
ռակ Վարդապետսարսնն Քրիստոնէական հաւատոյ ⁽¹⁾ :

չև իսպառ այսպիսի հնարիւք) ոչինչ բնաւ ամենեւին խափան
լինին ներքին բարեկարգութեան և յառաջադիմութեան վար-
ժարանիս դիտովի՛ն.....

Ն. Մ. Հ. ԳԱՅՐԻԷԼ ԱՅՎԱԶՈՎՍԻԻ.

..... Վ. Հ. Սարգիս թուի թէ չև ևս աւարտեալ է գերկոսին
թուղթս իւր բազմիջեանս, զորս անձանձրոյթ համբերութեամբ
դրէ, որպէս կարծեմ, յայդուէ մինչև ցընդերեկս, դի յետ վեր-
ձանութեան լրագրոց, զուարճութիւն մեծ թուի նմա և գործ
կարեւոր վիճաքանել ընդ մեծի եւ ընդ փոքու զհետսի խնդրոց եւ
զանցելոց սուս կառն սնոսի վարկածից. բայց ընդ մեզ (դէթ առ
երեսս) բարւոք վարի.....

Ն. Մ. Հ. ԳԱՅՐԻԷԼ ԱՅՎԱԶՈՎՍԻԻ

(1) Այս Վարդապետսարսնը, ինչպէս վկայում է Պ. Սյվաղովու-
քին, Պօլսի նախկին Պատրիարք սրբազան Յակոբոս արքեպիս-
կոպոսի և Կրօնական ժողովի հրամանով է տպւած : Եթէ
ստոյգ է այս, ապա ուրեմն Կրօնական ժողովը ան ընդունակ
է նաև դաւանաբանական խնդիրները վճռելու, որ մի փոքր
յառաջ նորան էինք վերագրում : Բայց մի բան տարակուսե-
ցնում է մեզ : Պ. Սյվաղովուքին հրատարակեց իւր շրջա-
բերականի մէջ, թէ Հայոց եկեղեցու ընդդէմ տպւած բոլոր
կտորները տպագրութեան սխալանք են. ասել է թէ Պ. Ճանիկ
Արամեանը իւրեանից է շարադրել այն բոլորը : Պատճառ,
տպագրութեան սխալ կարող է լինել տառի կամ շատ շատ մի
բառի մէջ, իսկ զբաշարը, որչափ ևս անփորձ լինի իւր գործին
այնու ամենայնիւ, չէ կարող իւրեանից շարադրել էջեր, շարել
և տպել : Այս եթէ մի մերկ զրպարտութիւն է, թող Պ. Ճանիկ
Արամեանը հողայ և բողոքէ, մեք այս մասին փոյթ չունինք,
բայց այսչափ միայն պարտական ենք ասել ճշմարտութեան
համար, որ եթէ դիրքը զատապարտվելուց յետոյ խոստովա-

Այս Վարդապետսարանի վերայ էր գրել Պ. Էմինը իւր Ռուսերէն քննութիւնը, որ Պ. Այվազովսքին Մասեաց Աղաւնու մէջ յիշատակումէ, թէ մի Ռուսերէն ձեռագիր տեարակ, իւր ընդդէմ գրված ման է գալիս ժողովրդի մէջ:

Այս Վարդապետսարանն էր, որ Ռուսիոյ ներքին գործոց քաջափայլ մինիստրի ձեռքով դատասպարարուեցաւ: Պ. Այվազովսքին չէ կարող հակառակը պնդել, ըստ որում իւր սեպհական ձեռնագրով, Պ. մինիստրի հրամանին համաձայն, առաջարկութիւն գրեց թեմական ատենին, որ սա շրջաբերական հրամաններ տարածէ բոլոր վաճառված վարդապետարանքը յես. անլու և իւրեան հասուցանելու համար, ըստ որում այժպէս էր քաջափայլ մինիստրի հրամանը:

Այս Վարդապետսարանն էր, որի վերայ մեր գրած բազմիջեան քննութիւնը ընդհանուր Հայոց Վեհափառ Կաթողիկոսը ընդունելով, շնորհեց մեզ իւր օրհնութեան կոնդակը, որի մէջ « խարզախամիա գրուած, մոլորական բան և յաւէտ գայթակղեցուցիչ սարգամտաց » անուանումէ Պ. Այվազովսքիի Վարդապետսարանը: (1)

նեցաւ նորա սխալականութիւնը, ուր էր նորա ուշը, երբ տպված ստանումէր Փարիզից և տալիս էր դպրոցի աշակերտների ձեռք. չկարգանց, չտեսաւ: Եւ Հայոց եկեղեցու հրապարակեալ անհարազատը Հիւսիսափայլի գրիչները պիտի կրօնադրո՞ւժ քարոզէ: Յիրաւի, մինչև ի կատակ բարձրանումէ սորա ծայրը:

(1) Երբ 1860 թուականի Հոկտեմբերի մէջ, ազգային դորձերով դաանվումէինք Եջմիածին, Վեհափառ Հայրապետը, վերադին շնորհելով մեզ իւր օրհնութիւնը, յայտնեց, թէ

Այս Վարդապետսարանն էր դարձեալ, որ, առանց նորա դատապարտութիւնը, քաջափայլ մինիստրի կողմից, յիշելու, Պ. Այվազովսքին, աղանէական պարզմտութեամբ, ուղարկեց Վեհափառ Կաթողիկոսին, վերստին տպելու հրաման խնդրելով: Պատճառումէր իւրնամակի մէջ, թէ բոլոր տպվածքը վաճառված լինելով կարօտութիւն կայ վերստին տպելու: Յոյս ունէր նա, որ Վեհափառ Կաթողիկոսը, թերևս առանց կարդալու, հրաման կը տայ և՛ինքը յետոյ, Կաթողիկոսական ստորագրութեամբ, կարող կը լինի դատապարտվածը որպէս արդարացած վերստին հրատարակելու:

Բայց այլապէս եղաւ բանի վախճանը: Վեհափառ Կաթողիկոսը ընթերցաւ, քննեց և, գտանելով սխալական և Հայոց եկեղեցու վարդապետութեան հակառակ, արգելեց: Այս իրողութեան մասին մեզ պատմել է նոյն ինքը Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը:

Ահաւասիկ մեր լինելոց քննիչը, ահաւասիկ Պ. Այվազովսքին, ըստ մասին: Եւ մի՞թէ այս անարատ մար-

Պ. Այվազովսքին, իւր « Վարժ Յիսուսի » ասված գրքի թարգմանութեան մէջ, հակառակ է խօսում Հայոց եկեղեցու վարդապետութեան, ուստի և նորին Վեհափառութիւնը քննում է և նշանակում է ասացեալ գրքի այն տեղերը:

Պ. Այվազովսքիի դէպ ի Հայոց եկեղեցին ունեցած յարաբերութիւնը, Վեհափառ Կաթողիկոսը, պաշտօնական թղթով յայտնած է Ռուսիոյ Տէրութեան: Եթէ Պ. Այվազովսքիի գրելիք քննութեան պատասխանելու հարկին հանդիպինք, դէ՞թ առիթ կունենանք այդ թղթերը և այլ կոնդակներ հանդէս հանելու.....

դը, (որի բարոյականութեան և մինչեւ այժմ ունեցած
 ընթացքի վերայ ոչ ոք համարձակութիւն չունի արատ
 շփել), իրաւունք չունի, իւր անսխալական քննու-
 թեամբ, իւր հակառակորդը դատապարտել, մանա-
 ւանդ եթէ նոցա հայեացքը օգտակար չէին ինքեան :
 Թող Հ. Սարգսի համար Աբբային զրած նամակները
 վկայեն



Թէ և մարզարէ չենք, բայց ընթերցող
 հասարակութեան, այժմէն գուշակումենք Պ. Այվա-
 դովսքիի ասելիքը այս նամակների մասին : Այն ժամա-
 նակ նա չէ ճանաչում եղած Հ. Սարգսին և յետոյ, ճա-
 նաչելով, ի Յայտարարութեան անցից Մուրաշեան
 Վարժարանին, հռչակել է նորա իրաւունքը :

— Եւ այսպէս .

« Պ. Այվադովսքին Սամանեան պատմութեան մէջ
 Հայոց ազգը հերձուածող է զանչում : »

— Այդ տեղ նա մեղաւոր չէ. առանց նորա կամքին,
 վանքը յաւելացուցել է այդ էջերը : ⁽¹⁾

« Պ. Այվադովսքին ինչի՞ համար ընդունեց : »

— Ո՛վ է այդ հարցանողը :

(Պ. Այվադովսքին պատասխանում է) « Մի հերիտի-
 կոս : »

— Քրիստոնէական հաւատոյ Վարդապետարանի
 մէջ, Պ. Այվադովսքին հակառակում է բուն Հայոց
 եկեղեցու վարդապետութեան :

(1) Պատմութիւն վերադարձի երից վարդապետաց.

« Տպագրութեան սխալանք են. գրաշարը շարադրել է այն բոլոր կտորները : » ⁽¹⁾

— Ո՛չ, Պարոն, հեղինակի ձեռագիրը, որ կայ տըպարանի մէջ, վկայում է, թէ գրաշարը և ոչ անգամ մի տառ փոխած է. ուստի տպագրութեան վերայ յանցանք դնելը դրարարտութիւն է :

« Ո՛վ է այդ հետախոյզը : »

(Պ. Այվազովսքին պատասխանում է) — Մի անհաստ :

« Վ. Հ. Սարգիսը իւր պաշտօնից ձգելու համար, Պ. Այվազովսքին գրում է Աբբային լրտեսական նամակներ : »

— Այդ նամակները գրելու ժամանակ նա չէր և տնայում Հ. Սարգսի արժանատրութիւնը : ⁽²⁾

« Անարժանութիւնը ինչպէս էր և անաչել :

— Ո՛վ է այդ քննիչը :

Պ. (Այվազովսքին պատասխանում է) « Մի անբարոյական մարդ : »

— Պ. Այվազովսքին իւր դպրոցի կանոնների մէջ (§ 54) դնում է, « թէ որ մէկը պատիժ կընդունի, առաջ պիտի կատարէ զայն և յետոյ, թէ որ ասելիք մը ունի, տեսչին հասկցնէ : »

« Պատիժը կրելուց յետոյ արդարանալու օգուտը ինչ է : »

(1) Պ. Այվազովսքին շրջաբերականի մէջ :

(2) Պ. Այվազովսքիի տալու պատասխանը :

— Այդ կանոնը կատարվելու համար գրված չէ. ուստի և ոչ կիրառական : ⁽¹⁾

« Չկատարվելու կանոնը ինչ պատճառով է տրււմ : »

— Ո՛վ է այդ իրաւաբանը :

(Պ. Այվազովսքին պատասխանումէ) « Մի ապստամբ մարդ : »

« Իրաւունք թողո՞ւց Պ. Այվազովսքին այսուհետև իւր գործերին կամ գրածին հաւատարու..... »

— Անտարակոյս :

« Ի՞նչպէս թէ անտարակոյս . Յունվարի ասածից հրածարվումէ Փետրվարին, մի տարի յառաջ գրված բանից հրածարվումէ ներկայումս : »

— Խէղճ մարդ, որ գեռ չգիտես, թէ ճշմարտութիւնը օրացուցի պէս, տարին մի անգամ փոխվումէ . հարկ դիպուածներում և ամիսը մի անգամ :

« Հասկացայ, և օրը քանի միանգամ : »

— Այո՛, օրքան շատ, այնքան լաւ . նոքա բարոյապէս անեցնումեն մարդու հասկացողութիւնը.....


(Աներեւոյթ սատանան) « Կեցցէ Հոգեւոր վարժարիւնը . Կեցցէ Լօյօլան : »

Առ այժմ միշտ չունինք ուրիշ բան ասելու . առ այժմ հերիք անումենք երկու տողով : Բայց մեր տեսածը և լսածը մեր հետ գերեզման չտանելու խոստումը անումենք հրապարակով : Ընթերցող հասարակութիւնը կարող է հաւատ ընծայել մեր խոստումներին, մանա-

(1) Պ. Այվազովսքիի բարեկամների մի նամակից, ուր նամակագիրը գնումէ Պ. Այվազովսքիի բուն խօսքերը :

ւանդ եթէ յիշէ, որ ոչ երբէք զանցառու եղանք մինչև
այժմ կարելի հրատարակութիւնների մասին :

Թող Պ. Չամբուհեանը քարոզէ, թէ հոգեւորներից
դուրս փրկութիւն չկայ, թող Պ. Սյվազովսքին իւր ըս-
պառնացած քննութիւնը սկսանէ, (ո՛հ, ի՞նչ սարսափ
մեր համար), Հիւսիսափայլը կը կշռէ նոցա արժանի
պատասխանը : (Sic!)



春

